

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն, Тифлисъ, Редакция «Мшакъ»:
կամ Tiflis, Rédaction «Mschak»:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՄՇԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բժշկութիւնը օգուտ է շնորհիւ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Բաղադրային Գումարի նիստը, Ընկերական ոգու բացակայութիւնը, Նամակ Ներքին-Արտա- յից, Նամակ Գարաչիչազից, Նամակ Խմբագրին, Նամակ Խմբագրին, Ներքին լուրեր, ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Լուրեր և Պօլսից, Արտաքին լուրեր, —ՀԵՆՈՒՄԻՆԵՐ, —ԲՈՐՍՍԱ, —ՏԵՂԵԿԱՅՈՒՅՑ, —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, «Մշակ» և այլապիսի հայերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՎ ԵՒ ՋՐՈՎ

Այժմ, երբ մեծ քաղաքների բնակիչները տեղափոխվում են ամառանոցները, հետա- քրքիր է մի հայեացք գցել այն բժշկական միջոցների վրա, որ մարդկանց մեծամաս- նութիւնը դործ է ածում, առանց ուշա- դուրեմի դարձնելու թէ բժշկների ցուց- մունքների և թէ կենսական փորձի վրա: Յայտնի է որ այժմեան դարում հիւան- դութիւնների մեծ մասը կապված է ջրա- յին խանդավառան երևոյթի հետ, քաղաքնե- րի բնակիչների մեծ մասի կեանքը, նրանց պարապմունքները, ժառանգական յատկու- թիւնները, ընտանեկան կեանքի առանձնա- յատկութիւնները՝ ճնշեցնում են մարդկանց մէջ այլ և այլ ջրային հիւանդութիւններ:

Այժմեան ջրային դարում բժշկվել օգուտ է կամ այլ և այլ ջրերով՝ չէ կարելի առանց բժշկների ցուցման և հրամանի: Որինակ մեզանում, Թիֆլիսում՝ ծեր թէ երիտա- ւարդ, կին թէ մարդ, հիւանդ թէ առողջ —ամենքը, առանց խորութեան, սովորու- թիւն ունեն լողանալ մեր քաղաքի հոգա- կաւոր ծծմբային տաք ջրերում, այն ինչ այդ ջրերից օգուտը պէտք է կատարվէր միմիայն բժշկի ցուցման համաձայն: Ա- մենքը գնում են մեր ծծմբային բաղնիսնե- րը, առանց մտածելու անգամ թէ ջրի տաքութեան ո՞ր աստիճանն է յարմար այս կամ այն կազմակազմին, այս կամ այն հա- սակման....

Եւ եթէ բժշկի խորհրդին չեն դիմում, գոնէ այնքան դիտող լինէին և ուշադրութիւն դարձնէին ջրերի այդ տեսակ գործածու- թեան հեռանկարների վրա:

Այլ և այլ մարդկանց համար, նոյն իսկ ըստ երևոյթի առողջ մարդկանց համար, նայելով նրանց կազմակազմին, նրանց ջրա-

յին սխտանայի տրամադրութեան՝ կարող է օգտաւէտ լինել կամ ծովի ջրի մէջ լո- ղանալը, կամ միներալեան ջրերից օգտվելը: Սակայն որոշել թէ ում աւելի օգտաւէտ է ծովի ջուրը, կամ ում աւելի օգուտ կը տայ միներալեան ջրի գործածութիւնը, — դա անձնական փորձի խնդիրն է:

Ջրային հիւանդութիւնները մեծ աջո- դութեամբ են բժշկվում և օգուտ: Սակայն, ինչպէս ասում է երևելի գերմանացի դիտ- նական Կրաֆտ-Էքերտ, որոշել թէ ո՞ր հի- ւանդին աւելի լաւ է բժշկվել լեռնային օդով, և ո՞ր հիւանդին հարկաւոր է գնալ ծովի ափը, — դժուար է, և չը նայելով բո- լոր ուսումնական հետազոտութիւններին, այդ հարցը ամենաճիշդ կերպով վճռվում է անձնական փորձով:

Միայն հաւանական է, որ ստորագիր երկիրների բնակիչների համար աւելի օգ- տաւէտ է բժշկվել լեռնային օդով, իսկ այն անձանց համար, որոնք սովորաբար ապրում են ծովի մակերևոյթից 1200 ոտնաչափ բարձր, աւելի օգտաւէտ է բժշկվել ծովի օ- դով: Սակայն անհասանելի շատերի համար օգտաւէտ է օդի թէ առաջին և թէ երկ- րորդ տեսակը:

Մեր մեծ քաղաքների բնակիչները, երբ ամառ ժամանակ տեղափոխվում են այլ և այլ ամառանոցներ, սովորաբար ուշադրու- թիւն չեն դարձնում թէ այս կամ այն ամառա- նոցը որքան բարձր դիրք ունի ծովի մա- կերևոյթին համեմատ: Մեկը տանում է իր հիւանդին բարձր, որովհետեւ բարձրում ա- լիք է հիւանդին մի առ հիւանդը հեռու Վճօր, առանց մտածելու թէ այդ բարձր լեռնային տեղը որքան օգտաւէտ կամ վնասակար կարող է լինել իր առողջութեան համար, և այլն...

Եւ առհասարակ մեր բոլոր ամառանոց- ները շատ բարձր դիրք ունեն: Իսկ շատ բարձր լեռնային երկիրներ՝ ամենքի համար օգտաւէտ չեն:

Մեր վերեւ յիշված գերմանացի դիտա- կան Կրաֆտ-Էքերտ ասում է, «Առհասարակ պէտք է ընդունել, որ այն տեղերը, որոնք չեն համարում 1200 ոտնաչափի բարձրու- թեան ծովի մակերևոյթից բարձր՝ շատ քիչ օգուտ են բերում ջրային հիւանդնե- րին, իսկ այն լեռնային տեղերը, որոնք ծո- վի մակերևոյթից 3000 ոտնաչափ բարձր

են գտնվում, օգտաւէտ են միմիայն Ֆիզի- կապէս առողջ մարդկանց համար, այսինքն այնպիսի անհասանելի համար, որոնք են- թարկված չեն ոչ զլիս ցաւերին, ոչ ջրային սխտանայի խանդավառան, կամ արիւնի պա- կասութեան:

Եթէ այդպէս է, ուրեմն մեր բոլոր ամա- րանոցներից շատ քիչերն են պիտանի ջրային հիւանդներին, քանի որ նրանցից մեծ մա- սի դիրքը 3000 ոտնաչափից բարձր է ծո- վի մակերևոյթից:

Արդէն Վճօրը 4000 ոտնաչափ բարձր է ծովի մակերևոյթից, Մանդիսը և Բօր- ժօմը միայն ցած են Վճօրից, իսկ Աբաս- թիմանը, Գարաչիչազը և այլն, Վճօրից էլ բարձր դիրք ունեն:

Հարկաւոր էր որոշել մեր երկրի մէջ այն- պիսի լեռնային տեղեր, որոնք յարմար լի- նէին այս կամ այն ցաւերին երկարկված հիւանդներին և յարմարեցնել նրանց հի- ւանդների կեցութեան համար:

Մեր երկրում շատ տեղեր կան, որոնք կատարելապէս անտես են առնված, բայց որոնք ծովի մակերևոյթից 3,000 ոտնա- չափ բարձր չը լինելով, մեր վերեւ յիշած գերմանացի դիտականի ասելով, կարող կը լինէին ջրային հիւանդների համար առող- ջական շատ յարմար կայարաններ լինել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՍԱՆԱԿԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Թիֆլիսի Գումարի վերջին, յունիսի 5-ի արտա- կարգ նիստը ամբողջապէս նուիրված էր քաղաքի սանիտարական դրութեան բարելոման, ի նկատի ունենալով խոլերայի դաւու վտանգը:

Մասնագիտացող սանիտարական յանձնաժողովի և վարչութեան կազմած ղեկուցման հետ, Գուման մաս մաս երկարակից քննութեան բոլոր առաջար- կութիւնները:

Վճռվեց. 1) Կազմակերպել 10 հատ սանիտարա- կան խմբեր, որոնց պարաքը պիտի լինի հսկել քաղաքի մաքրութեան վրա, և բայի դրանից հրաւիրված բժիշկների միջոցով խոլերայի ժամա- նակ օգնութիւն հասցնել բնակիչներին: 2) Հիմնել

քաղաքում հինգ հատ բուժարաններ, անկողնակա- ներով, ֆելդշերներով և սպասաւորներով: 3) Յառ- կացնել 12 հազար լուրջի՝ հիւանդանոց հիմնելու խօրհրային հիւանդների համար: 4) Ունենալ սե- փական կառքեր հիւանդանոցների համար, տալ էլի 4,000 ռուբլի քաղաքի մաքրութեան համար և այլն:

Խօլերայի դէմ կռուելու միջոցների համար ծախ- սելի գումարը համարում է 46,000 ռուբլու:

Քաղաքի սանիտարներից դուրս, բացի նոյն իսկ քաղաքին մօտ տեղերի մաքրութեան վրա հսկելը, թողնվում է գաւառական իշխանութեանը ո- րովհետեւ այդ տեղերը դուրս են քաղաքի իրաւա- սութիւնից: Յանկալի է, որ գաւառական իշ- խանութիւնը՝ օգուտ քաղելով քաղաքի մշակած միջոցներից մի քանիսից, անմիջապէս ձեռնարկէր քաղաքի չընկալած մաքրելու գործին:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՈՂՈՒ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մեր անցեալ յօդուածում խօսեցինք այն մա սին, թէ ինչ դեր է կատարում ընկերական ոգին քաղաքակրթ շինարարում: Այս անգամ մի քանի խօսք՝ մեր երկրի մասին: Այն ինչ Եւրոպայում ամեն ինչ դրված է համերաշխ գործունէութեան ամուր պատանդի միջոցով, այն ինչ այնտեղ իւ- րաքանչիւր մի անհատի որոշման բարձր ձեռնար- կութիւն ընկերական միութեան մէջն է գտնում իր մարմնացումը և այդպիսով անհատների բաղ- դաւորութեան պայքարում: Քաղաքի միջոցով հիւանդների արեւելքներին մօտ բոլորովին հակա- ուակն է կատարվում Բաժան-բաժան, անհամե- րաշխ գործունէութիւնը մեր իբրեւ սուրբ ժա- ուանդութիւն ստացած բնաւորութիւնն է, նա- խանձը, չարակամութիւնը, կիրքը, ընկերին և հա- րեանին շնորհակալ ձգտումը, մի խօսքով, այն բոլոր տեղի յատկութիւնները, որոնցով այնքան հարուստ է յետադէմ հոգին, ահա այն մի- ջոցները, որոնցով ղեկավար գիտում ենք մենք մեր նպատակին: Իսկ հետեւանք, արդիւնքը: Դրանց տեսնելու համար հարկաւոր չէ չափ հե- ուուն գնալ մեզինց իւրաքանչիւր իր կեանքի սեփական գործունէութիւնից կարող է հարկաւա- ւոր դէպքեր պատմել, թէ ինչպէս իրան աջողվեց այս ինչ մաքրու առաջը մի քար գցել, այն ինչ ձեռնարկութեան քանդման պատճառ դաւա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՄՇԱԿ» ԵՒ ԱՅԼԱԿՐՈՆ ՀԱՅԵՐԸ

Այժմ երբ «պահպանողական» կոչվող կու- տակցութիւնը ոչ մի միջոց և ջանք չէ խնայում «Մշակի» անունն աղարտելու համար—անուշտ իր կրած պարտութիւնների վրէժը լուծելու դիտ- մամբ, «Արձագանքը» լրագիրը հրապարակ է հա- նում այնպիսի հարցեր, որոնք հազար անգամ յեղ- յեղված են յետադէմ մամուլի մէջ, առանց նրա ճակատը յաղթութեան դափնիով պսակելու և ո- ղոնք ներկայացվելով այժմ յեղաշրջված դիրքով՝ նայաւոր ունեն պարզապէս պղծորով ընթերցողի մոտքերը: Մենք դեռ ևս դժուարանում ենք հաւա- տալ, որ «Արձագանքը» լրագիրը՝ գէթ այն խնդ- րում, որի մասին պիտի խօսենք, կատարելապէս համամիտ լինի այն թերթի ուղղութեան հետ, ո- րին պարտաւեղում համար մի ժամանակ այնքան մեծ ձիգեր էր դործ դնում, և ուրանայ այսպէս իր բովանդակ անցեալ գործունէութիւնը և իր նախկին համոզմունքն ու հրատարակութիւնները: Ինչ անուշ պէտք է տալ այն վարմունքին, որով մի և նոյն խնդրին երկէ համակրութիւն էր ցույց տրվում և այսօր հակակրութիւն, երկէ համաձայ- նութիւն էր յայտնվում, և այսօր մերժվում է, և- րէկ օգտակար կամ գէթ անվնաս համարված այ-

սօր մեղադրել է դաւաճում: Ո՞վ կամ ինչն է կերպարանաւորու եղած. քննութեան առարկայ ե- ղող խնդիրը թէ քննողը: Այսօրինակ վարմունքը, այդպիսի տրամաբանելու և քննադատելու կերպը՝ մեր դիտաւորները չեն:

Յետադէմ մամուլը և նրա այժմեան աշակիցնե- րը, երբ սպառում են իրանց ապերախ ընդդիմա- խօսութիւնների շարքը, ձեռք են առնում խնդր- այլակրօն հարցերին, որոնց խնդիրը յետադէմների համար մի անկողնակալի casus belli է դարձած «Մշակի» դէմ: Եւ նրանք գրկում են այս խնդիրը՝ միշտ այն կողմ փտաւորութեամբ թէ ահագին մա- նացու հարուած են տալիս «Մշակին»: Բայց հարկաւոր է միայն փոքր ինչ լուրջ և կանխակա- կարծիքներից ազատ լինել խոստովանելու համար, որ պահպանողական մամուլի բովանդակ ջանքն այս մասին՝ ոչ թէ միայն կատարելապէս ապար- դիւն, այլ և զլիւսովին ձեռնաակար է այն դատին, որին պաշտպան են հանդիսանում իրանք և թէ այն բազմակողմանի հարցերի մէջ, որ իր ծննդեան օրից յարուցել է և տարածել «Մշակը», այլակրօն հայե ըմբռնում նրա profession de foi-ն իր անկողնա- պահ, առաջադէմ և օգտակարագոյն հայեաւքնե- րից մինն է եղել:

Ինչ որ ուրիշ քրիստոնեայ ազգութիւններում արդէն աւելորդ և միջն է իսկ ծիծաղելի պիտի համարվէր բացատրելը, մեր մէջ դեռ ևս հարկա- ւոր է նկատվում և այն էլ ոչ թէ մի, այլ հարիւ- րերորդ անգամ:

Մինչև երբ արդեօք հարկ պիտի լինի կրկի- նել և երեքինել դեռ ևս սա տարրական ճշը- մարտութիւնը թէ ազգութիւն և կրօն բոլոր- րովին տարբեր բաներ են և թէ բողոքական կամ կաթօլիկ դաւանութեան մէջ ծնված հայը՝ այնպէս անգամ է հայ ազգութեան, որչափ լուսաւորչա- կանը: Յատկանշական իրաց վրա այս կամ այն համոզմունքն ունենալը ինչպէս և նոյնը բոլորու- վին չունենալը մարդուս չէ անջատում իր ազգու- թիւնից: Միշտ արարելու է եղած և պիտի մնայ՝ սա համարձակ բացազանցութիւնը մի հայ ա- սու ու ծածարանի, թէ «հայը հայ է վստահ զի հայադասն է, առանց այնի հայը հայութիւնը թողել է և հայութեան համար կորել է», այն- չափ արարելու որչափ է այլակրօն հայերի ազգու- ն խաւարաւոր մասի անդամը թէ ինք հայ չէ, այլ «Քրէնկ» կամ «բրոք» վստահ զի կաթօլիկ կամ բողոքական կրօնն ունի, դադարաւոր, որոնցից տխրագոյնը դժուար է երևակայել: Եւ եթէ կայ ուրախալ մի բան այս խնդրի յուզումից, այն էլ սոյն անհիմնեթ դադարաւորների երկու կողմից էլ զգալապէս նուազելի ու տկարանալն է:

Հայութիւնը այս կամ այն կրօնի անբաժան մասը չէ: Հայութիւնը աւելի առաջ է քան հայ եկեղեցին: Մեր նախահայրերը, որ Արտեմիսի ու Ա- նահիտի բաղնիքների վրա զոհ էին մատուցանում, իջ- ման տաճարի մէջ ծննդաւորները կամ այլ աղօթա- րաններ յաճախողները նուազ ճշմարիտ հայեր չէին: Կրօնի հազանդութիւնը ազգայնութեան հետ կապ

չունի, ինչպէս նոյնը տեսնում ենք աշխարհի բո- ւր ազգերում, երբ սրանք տամնակ դաւանու- թիւնների բաժանված անդամներ ունեն և այս պարագան արդեւ չէ լինում նրանց ազգային պարտականութիւնները կատարելու: աղքը և ազգայնութիւնը նոյնն են մնում միշտ, եթէ ար- տաքին նախական պարագաներ անսպաստ չեն լինի դրան. չափ թերի պնդումն է թէ ազգայնու- թեան անհետանալը կրօնափոխութեան հետեանք է, այս կէտը պատմական հիմք ունի, որը միշտ պատրաստ ենք ապացուցանել:—Մի խօսքով կրօնը հաւատարկաց ստացուածք է, որը ամեն ազգ, կամ այդ ազգի ամեն մի անհատ կարող է իրան սեփականացնել, առանց իր ազգային յատկա- նիւրը թողնելու:

«Մշակ» չէ պաշտպանում թէ կաթօլիկ կամ բողոքական հայերը հայրենասիրական գործ են կա- տարել ընդունելով այնպիսի դաւանութիւն, որ ազգի ստուար մեծամասնութեանը չէ: «Մշակ» կրօնափոխութեան յորդոր չէ կարգաւած և ոչ էլ կը կարգայ, վստահ զի նրա այն սկզբունքը, որով ընդդիմանում է յայտնի պարագաներում կրօնի խտրութեան, նպատակ ունի ոչ մէկի կրօնական համոզմունքը չը վիրաւորելով—նրանց բոլորին ազգային ընդհանուր սեղանի շուրջը բոլորել, և համոզել նրանց դիտակցաւոր և համոզախու- թեամբ գործել ամբողջ ազգային մարմնի բարո- յական վերաճութեան: Եւ ով կարող է ուրանալ այս նպատակի սրբութիւնը:

11.

հիշեց կարեօրոյթ թիւն ունի, որ «Մշակի» խմբագիրը լուսաստորջական է, երբ լրագիրը նրա ամենատնտեսական օրգանը չէ: Խնչու այսքան դարմանալու պիտի երեւայ այս պարագան: Մինչև որ մի հաղորդի ուղղութիւնը կրօնական չէ, նա պէտք չունի հայոց հայոց հասարակական և բարոյական շահերին նոյնութեամբ լինի և ոչ թէ նրա այս կամ այն թէկէ ստուարագոյն մասի: Ելմիա՞ծի: Արարատ» և Կ. Պօլսի «Պատեկը» և «Աւետարեւոր» թերթերը կարող են լուրագրանչութիւն իր հասարակութեան կրօնական խնդիրներով զբաղել և նոյնը պաշտպանել բացառապէս, բայց միայն լրագիր, որ կրօնական հանգամանք չունի հայ լուսարը շտանի անտես առնել ազգի այն մասի շահերը, որի դաժանութեանը չէ պատկանում խմբագիրը: Այն լրագիրը, որ ազգի մի մասի շահերի համար և հրատարակվում, նա ընդհանուր ազգային չէ: Աղգային լրագիրը եթէ այսօր ամբողջապէս զբաղվում է լուսաստորջական հայտի կամօրոյթութիւնը ընտրութեան խնդրով, վարը, հայկի պահանջած ժամանակ, պարտաւոր է զբաղվել կամ թօլիկ հայոց կամօրոյթիս կամ բողոքական հայտի զբաղապետի ընտրութեան խնդրով կամ նրանից ազդապետի ընտրութեան խնդրով կամ նրանից բողոքական մի այլ կարծի հասարակական խնդրով: Այսպէս է հայկական «Մշակը» աղգային բովանդակ հայ ազգի օգտին ծառայելու նոյնութեամբ լրագիրը զերը: Եւ ինչպիսիքս դուրս մ նախ և նախորդեալ դուրս մ (Կը չարժանակիլ)

№ 3
ԲԱՌՈՒՄԻՅ մեկնում է . . . 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . 12 > 25 > ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 1 > 20 > ցերեկ.
ԲԱՌՈՒՄ հասնում է . . . 7 > 30 > առաւ.

№ 4
ԲԱՌՈՒՄ մեկնում է . . . 11 ժ. 10 ր. գիշեր
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . 5 > 50 > երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 6 > 50 > երեկ.
ԲԱՌՈՒՄ հասնում է . . . 8 > 15 > առաւ.

Խառն զննքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է . . . 10 > 10 > առաւ.

ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է . . . 7 > 35 > երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . 7 > 30 > առաւ.

ՌՈՒՍԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒԿԵԱՆԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան, շրջական
բեյաթի, Բաթումից դէպի Օդէսա.

ՇԱԲԱԹ, 8 ժամին երեկոյեան նմանապէս:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից
դէպի Կ. Պոլիս:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Թիֆլիսի ԲԱՌԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընդհանուր զիտութեան, որ
ինքն նշանակելով քաղաքային բժշկական-ֆէկտորի պաշտօնում բժշկի Ե. Բ. Բազա-
մատին, որը բնակվում է Միքայելեան փողոցի վրա, Վորոնցովի արձանի դիմաց, № 19,
խնդրում է, սուր-տարափոխիկ հիւանդութիւնների դէպքում, դիմել անմիջապէս վերոյի-
շեալ բժշկին դէպքերիցիւն առնելու և բնակարանները ասեղնադարձի առնելու համար:

1—1

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 12/24 յունիսի, դուրս կը գնայ ԲԱՌՈՒՄԻՑ EBRE (ԷԲՐ) նաւը, նաւա-
պետ MATHÉ դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հալիք, Լօնդոն, մոնեթով և միջանկեալ նաւա-
հանգիստները:

Ազէնաները՝ ԲԱՌՈՒՄԻՍ՝ ՄԱՆՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍԻՍ՝ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, Իսկ ԲԱՌՈՒՄ
մէջ՝ ԳՕԼԻՒՍԻՍ:

(№ 23)

2—2

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ
ՀԱՄԱՋԱՍՊ ՕՐԲԵԼԻ

Սոյալականայա փողոց, սեփական տանը № 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145)

57—150

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող
իւրաքանչիւր անձի համարու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարու-
թիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսուցմանը համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղւակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/100 մինչև 120/100
վաճառվում է եղբայր Ծովիսովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ.

Тифлиς, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Ма-
вужьянцу.

Գինը է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին դիմում կը լինի: 99—150
(9—№ 95)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Կենսագրական տեսութիւն (պատկերով)

Խ. ՄԱՆՈՒՄԵԱՆԻ

Գինը կարելի է գրավաճառանոցներում: Գինն է 40 կ.: Օտար քաղաքներից դիմել
հեղինակին, Մշակի՝ Խմբագրատուն:

(№ 45)

5—5

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հասցենը տարածութեան
վրա.

ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐԲԵԼԸ.

Էլեկտրական նշաններ.

ՋԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱՎԱՆՈՊԼԱՍՏԻԿԱ.

Էլեկտրոլիզ.

Ակումուլատորներ, Էլեմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահայրերի և ծրագիրների ձրի-
արար.

(91—№ 5)

ԷԼԷԿՏՐՈՆ

ԳԼԵԲՈՎ Կղարայրների

ՐՕՍՏՈՎ (Գօնի վրա)

Մեծ Սաղօվայա փողոց,

24

Էլեկտրոլիզ.

ՐՕՏՈՎ (на Дону)

БР. ГЛѢБОВЫ

Большая Садовая, 24.

69—100 (Կ. շ.)

ԳԱՋԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտոմո սխառնայի, որոնք իրանք
իրանք են ուղղում ու օժուկ:

Գազի համար — ածուխից,

— — — նաւթից,

— — — անտրացիտից,

— — — կէրօսինից

1/2-ից մինչև 120 ձիու ոյժի:

Շօգեմեքնանք մեծ արագու-

թեան.

69—100 (Կ. շ.)

ՄԻ ՖԻՐԱՆՍՈՒՀԻ կամենում է դասեր ունենալ: Հասցեն. Нѣмецкая ул.,
տուն № 5 (ձիաքաշի պոստերու տեղը):

(№ 56)

6—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍՈՐՆԱԼ ԱՐ-
ՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլոգլինսկու մեթօդով և Շէդդեր
Ֆրանսիական մեթօդով:

2) Կարի դասեր մօզային ժուրնալներով:

3) Հարթակարի և զանազան ձեւազարդների դասեր:

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու հա-

մար:

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկո-

յեան:

Ցարական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը

ձրի: (№ 23)

28—40

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՈՆԻ ՎԱ-
ՀԱՌՈՒՄՆ

Սիլվրանի ասֆալտի զործարանի Բարձրագոյն հաստատված բնկերութեան Թիֆլի

ՍՈՒՄ ԵՒ ԲԱՌՈՒՄՈՒՄ: Ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով.

ԹԻՖԼԻՍ. Ալեքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերնեաեվին:

ԲԱՌՈՒՄ. Սաղօվայա փողոց, № 3, պ. Սուխանովին:

№ 24

8—15

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սոյալականայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային զործարանի հիւ-
սուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկիների զգեստների, մանուկների զգեստ-
ների և պարոնների շապիկների համար:

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով:

Սարպինկայի զուգանքների թել, սաղա, գոյնգոյն: Ներկերը տեղական են:

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կօպէկ:

Սարպինկայի իւրկաներ 1 ռ. 80 կ. և աւելի թանգ:

Սարպինկայի քթի աղւակներ և գլխի թաշկինակներ:

ՖԱՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԵՆԴԵՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՈՎ

(№ 47)

15—30

Պետերբուրգի հայ ուսանողների հետեւեալ հրատարակութիւնների պահեստը փո-
խադրված է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը, ուր և կարող են դիմել ցանկա-
ցողները:

ՀԱՅ-ՌՈՒՍՆԵՐԷ ԲԱՌԳԻՐԻ, գինն է. 2 ռ.

ԳԱՐԲԱԼԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ (սակաւաթիւ). 1 " 2 4.

ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ — " 3 4.

ԱԶՕ ՄԱՐՈՒՆ — " 8—8

№ 54

Ա. Մուղղուսի Զակրեանցի զործարանում պատրաստվում են ամենաէփան գներով
ամեն տեսակ քարեր լիտօգրաֆիայի համար: Օտարաքաղաքացիք դիմում են հետեւեա
հասցեով. Шуша, Типо-литографію Мугдусіакопова.

4—4

Է Վ Է Լ Ի Ն Ա

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ ՎԷԿ (հոգեբանական էտիկ).

Գինը 50 կօպէկ (պոստի ծախսով)

Ծախվում է. Մշակի՝ Խմբագրատանը, Կենտրոնական և Թիֆլիսի գրավաճառա-
նոցներում և Միքայելեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի գրավաճառանոցում.

(№ 126) 19—20

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԹԻ ԴԵՄ



ՕԼՖԱԿՏՐՈՐԻՒՄ ՆՈՒԴԻ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻՆ

Ծախվում է 40 կօպէկով

Դեղադործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-

սում

№ 12

30—40

ԵՂԲ. ԿՐԵՍՏՈՎՆԻԿՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿ.
Պ Ա Հ Ե Ս Տ Ո Ւ Մ, Բ Ա Գ Ո Ւ Ո Ւ Մ
Ստացված է Կովկի ԻՒԿ, լաւ տեսակի:
Վաճառվում են մեծ քանակութեամբ: Երեքից մինչև 16 պուդ տակառներով:
Հասցեն նամակների համար. Фабрично-торговому товариществу Бр.
Крестовниковыхъ, въ Баку.
Հեռագրիների համար. Баку, Крестовниковымъ. (№ 55) 7—8

ՓՄՅՏԻ ՄԵՍ ՊԱՀԵՍ (կայարանի մօտ, Կորգանովի ձիաքաշի գծի վրա)
Վաճառվում է մաս-մաս, սկսած 1/8 խորանարդ սաթէնից. չորս
խոհանոցի և հացադործների համար, ամենամատչելի գնով: Նոյն տեղը գնում են մեծ
քանակութեամբ փայտ անտառատերերից:
№ 56 5—10 (հ.)